ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«29» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 003/95

Ձեռնարկողը՝ ***«ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ***
գ. Եղեգիս, Քարագործների 1,2

Գործունեությունը՝ ***Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 00495
<29> 10 2020թ.

Վայոց ձորի մարզի Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղ

«ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվող Վայոց ձորի մարզի Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման նախագիծը մշակված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում, Եղեգիս գետի աջափնյա մասում, Շատին գյուղից 4կմ հյուսիս-արևելք, Եղեգիս գյուղից 0.5կմ հարավ-արևմուտք՝ ծ.մ.1525-1535մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքավայրից 100մ հեռավորության վրա ձգվում է Երևան-Եղեգնաձոր ասֆալտապատ ավտոճանապարհը:

Համաձայն նախագծի՝ Վայոց Ձորի մարզի Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները 28հա մակերեսի վրա հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀՀ-ի կողմից, 1986 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 286 արձանագրությամբ, 1986 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկվել են հետևյալ կարգերով և քանակով՝

Խճի արտադրության համար՝
Բլոկ 2-A - 966.8 հազ.մ^3,
Բլոկ 3-B - 2290.4 հազ.մ^3,
Բլոկ 4-C_1 - 2212.4 հազ.մ^3
Շինարարական քարի համար՝
Բլոկ 1-A – 57.0 հազ.մ^3, 0.23հա

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Խճի համար-90%:

Հանքավայրի 5.6հա մակերեսով տարածքում նախկինում արդյունահանվել է 45-50հազ. մ³ օգտակար հանածո: Սույն նախագծով 2.34հա նախագծված բացահանքի մակերեսն ամբողջությամբ ներառված է նախկինում արդյունահանման աշխատանքներով խախտված տարածքում: Բացահանքի արևմտյան կողմում գործում է Ընկերության սեփական քարամշակման արտադրամասը և ՋՏԿ-ն, որը ներկայումս շահագործվում է «ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ-ի կողմից:

Բացահանքի դաշտի օտարման տարածքը կազմում է 2.34հա, որում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարները կազմում են 402.4հազ.մ³, կորզվող պաշարները՝ 364.5հազ.մ³: Բացահանքի տարեկան արտադրողականությունը հաշվարկված է՝ մարվող պաշար՝ 8048մ³, կորզվող պաշար՝ 7290մ³: Բացահանքի ծառայման ժամկետն ընդունված է 50 տարի:

Նախագծվող բացահանքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1. X = 4414903, Y = 8529613;
2. X = 4414984, Y = 8529587;
3. X = 4415070, Y = 8529852
4. X = 4414989, Y = 8529877:

Հանքավայրում մակաբացման ապարների հաստվածքը ներկայացված է հողաբուսական շերտով և ալյուվիալ-դելյուվիալ գոյացություններով, որի հզորությունը դիտարկվող տարածքում տատանվում է 1.7մ-ից մինչև 3.2մ-ի սահմաններում, միջինը կազմելով՝ 1.98մ: Անդեզիտաբազալտների հզորությունը տատանվում է 8.3մ-ից մինչև 31.6մ-ի սահմաններում, միջինը կազմելով՝ 20.98մ: Հանքավայրի տարածքի 0.8հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը ''արտադրական'' ընդերքօգտագործման է, սեփականության իրավունքով պատկանում է «ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ -ին, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրեր են:

Արդյունահանման սույն նախագծով նախատեսվում է ադյունահանումը կազմակերպել բաց լեռնային աշխատանքներով՝ հիդրավլիկ ճնշմամբ հարվածասեպային եղանակով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- ամենամեծ երկարություն՝ 278մ,
- ամենամեծ լայնություն՝ 84.5մ,
- ակաբացման ապարների միջին հզորություն՝ 1,98մ,
- ամենամեծ խորություն՝ 20.0մ,
- ագտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակ՝ 402.4հազ.մ³,
- արդյունահանվող պաշարների քանակ՝ 364.5հազ.մ³,
- ակաբացման ապարների քանակ՝ 55.4հազ.մ³, որից 1200մ³-ը նախկին արդյունահանման աշխատանքներից մնացած տեխնածին թափոնային առաջացումներ:

Բացահանքը մշակվելու է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով՝ 2.5մ բարձրությամբ աշխատանքային հանքաստիճանով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- աստիճանի բարձրություն՝ 2.5մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյուն՝ 90⁰,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնություն՝ 30.0մ,
- անվտանգության առափների լայնություն՝ 1.0մ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնային համալիրի միջոցով: Հանույթային աշխատանքները կիրականացվեն "ЭО-3322" մակնիշի հիդրոսեպով էքսկավատորով: Օգտակար զանգվածը կտեղափոխվի սպառողի ավտոինքնաթափով: Մակաբացման ապարները ավտոինքնաթափով կտեղափոխվեն 0.5կմ հեռավորության վրա: Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է ներքին բուլդոզերային լցակույտաառաջացումը:

Հանքավայրի բացումը կիրականացվի նրա արևելյան մասից, որի մինչև հատակը՝ 1170մ բարձրության հորիզոնները շահագործվելուց՝ նրա վրա մակաբացման ապարները և տեխնածին առաջացումները տեղավորելուց հետո, կմշակվի հանքավայրի արևմտյան մասը:

Մակաբացման ապարները նախագծված բացահանքի եզրագծի մեջ ներկայացված են 0.4-0.6մ հզորությամբ /10900մ^3 ծավալով/ տարբեր քարերի բեկորներ պարունակող հողաբուսական շերտով և 1.7-2.1մ հզորությամբ ալյուվիալ դելյուվիալ նստվածքներով՝ քարաբեկորներ պարունակող ավազակավերով /որի ծավալն է 44500մ^3/: Մակաբացման ապարների 55400մ^3 ընդհանուր ծավալը բացահանքի շահագործման տարիներին սկզբում կտեղափոխվի հողաբուսական շերտի N1 լցակույտ, իսկ էլյուվիալ առաջացումները՝ N2 լցակույտ: N2 լցակույտ կտեղափոխվեն նաև օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ խառնված ապարները՝ 2400մ^3 ծավալով: N2 լցակույտ կտեղափոխվի նաև նախկինում արդյունահանման աշխատանքներից առաջացած տեխնածին առաջացումները՝ 1200մ^3 ծավալով:

Արևելյան մասը շահագործելուց և նրա հատակին N2 ու N1 լցակույտերը ավտոինքնաթափով տեղափոխելուց և փռվելուց հետո, կստեղծվի ներքին լցակույտ:

Հանքավայրի արևմտյան մասի շահագործման համար մակաբացման ապարները (որոնք տեղադրված են N2 լցակույտում) և արևմտյան մասի բացահանքը ծածկող մակաբացման ապարները, կտեղափոխվեն բացահանքի արևելյան մասի շահագործված հատվածի վրա՝ լցվելով 3.2մ բարձրության վրա կհարթեցվեն: Շահագործման ավարտին աստիճանաբար արևմտյան մաս տեղափոխված մակաբացման ապարները կփռվեն հանքավայրի 1170.0մ բարձրության հատակի մնացած մասի վրա:

Հանքավայրի համար խմելու և տեխնիկական ջրամատակարարումն իրականացվելու է հարևանությամբ գործող քարամշակման արտադրամասի ջրամատակարարման ցանցից: Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով նախատեսված է բարձման աշխատանքների ժամանակ, ինչպես նաև փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի և ածխածնի օքսիդները, ածխաջրածինները, պինդ մասնիկները (մուր): ՇՄԱԳ-ում հաշվարկվել են արտանետումների քանակները, որոնք փոշու համար գումարային կազմում են ընդամենը 0.588 գ/վրկ (առավելագույն), կամ 17.53 տ/տարի: Իսկ դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվել են 0.128 տ/տարի կամ 0.017 գ/վրկ: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /"Էռա"("Эра") համակարգչային ծրագրով/, որոնք համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների

(ՍԹԿ) հետ: Համաձայն հաշվարկների արդյունքների արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները /հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները/, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը: Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով կազմում են՝ անօրգանական փոշի - 0.48877, ազոտի երկօքսիդ - 0.059, ածխածնի օքսիդ - 0.08, սահմանային ածխաջրածիններ - 0.0037, պինդ մասնիկներ /մուր/ - 0.0386, ծծմբային անհիդրիդ - 0.04: Հանքավայրի շահագործման արդյունքում մթնոլորտային օդին հասցվող տնտեսական վնասը գնահատվել է 1423900 դրամ:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի լցակույտերի և ճանապարհների տարածքները: Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից կազմում է 500մ) կկազմի՝ 40դԲԱ (նորման՝ 45դԲԱ):

Բացահանքի շահագործման ժամանակ բնապահպանական միջոցառումները ներառում են.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ):
- աղմուկի մակադակի նվազեցման նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում՝ ձայնախլացուցիչ սարքավորումներով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում՝ ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- բացահանքի արտադրական հրապարակի շրջակայքում կանաչապատում՝ տվյալ ֆլորիստիկ շրջանին բնորոշ ծառերով և թփերով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում՝ արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում է որպես մետաղական ջարդոն:
- կենցաղային կեղտաջրերի հեռացում բիոզուգարանի միջոցով, որը կտեղադրվի արտադրական հրապարակում,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Որպես բնապահպանական միջոցառում նախատեսված է հողաբուսական շերտի՝ N1 արտաքին լցակույտի վրա իրականացնել խոտաբույսերի ցանք և տեղանքին բնորոշ ծառատեսակներով պաշտպանիչ եռաշերտով ծառատունկ, ինչը կհանդիսանա լրացուցիչ պատնեշ գետի և բացահանքի միջև, ինչպես նաև կմեղմվի տեսողական բացասական ազդեցությունը:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է բացահանքի շահագործման 30-րդ տարվանից սկսած՝ արդյունահանմանը զուգահեռ: Շահագործման ավարտից հետո ներքին լցակույտում տեղափոխված մակաբացման ապարները /ներառյալ ապարների մնացած 1800մ³ ծավալը/, բուլդոզերով կտեղափոխվեն 1170մ բարձրության հորիզոնի վրա, 3.2մ բարձրությամբ կփռվեն և կհարթեցվեն /որից 2.63մ-ը բարձրությամբ

էլյուվիալ առաջացումներն են, իսկ նրա վրա՝ 0.57մ բարձրությամբ՝ հողաբուսական շերտը/: Հարթեցումը կկատարվի ընդհանուր 26180մ² մակերեսում, այդ թվում՝ բացահանքի հատակի ողջ մակերևույթում /18435մ²/, արտադրական հրապարակի /1330մ²/, նախկին արտաքին լցակույտի /3425մ²/ և ավտոճանապարհների /2830մ²/ մակերեսներում: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացման իրականացման ծախսերը գնահատվել են՝ 583.7 հազ. ՀՀ դրամ: Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո նախատեսված է կենսաբանական ռեկուլտիվացիա՝ կիրառելով հիդրոցանքի եղանակը: Այս եղանակով կստեղծվի բուսական շերտ, որով հնարավոր կլինի կանխել հողի էրոզիան: Ընդհանուր ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 583.7 + 524.0=1107.7 հազ. դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը /արտադրական հրապարակում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում/, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի շահագործման ընթացքում «Սմբատաբերդ» ԲԲԸ-ն բացահանքում կիրականացնի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, աղմուկ, կենսաբազմազանություն/, որոնց իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

Եզրափակիչ մաս Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկումների ընթացքում մասնակիցների և մարզպետարանի աշխատակիցների կողմից կարևորվեց գործունեության իրականացումը՝ ինչպես մարզում սեփական արտադրություն ունենալու, այնպես էլ Եղեգիս գյուղում աշխատատեղեր և լրացուցիչ եկամուտ ունենալու տեսանկյունից: Ընկերությունը պատրաստակամություն հայտնեց օգտակար լինելու համայնքի բնակչությանը՝ ապահովելով հումքով, կամ աջակցել համայնքում սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, Վայոց ձորի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, կադաստրի կոմիտեն, առողջապահության և արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի /ԿԳՄՍ/ նախարարությունները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում: ԿԳՄՍ նախարարության կողմից ստացվել է կարծիք, համաձայն որի, բացահանքի տարածքը գտնվում է «Քաղաքատեղի Եղեգիս» հուշարձանի սահմաններում: Հանքավայրի համար տրամադրվող տարածքի և դրանում պատմամշակութային հուշարձանների առկայության վերաբերյալ հանձնարարականներ են տրվել նախարարության ենթակայության՝ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին՝ տեղում կատարելու ուսումնասիրություններ: Համաձայն կատարված

ուսումնասիրությունների արդյունքների՝ հանքավայրի համար նախատեսված տարածքի մոտ 300 x 80 մ չափերով հատվածը հուշարձանակիր տարածք չէ, իսկ մնացածում հայտնաբերվել է հնագիտական հուշարձան /տարբեր բարձրության և լայնության պատերի մնացորդներ/: Հաշվի առնելով նշվածը նախագծվող տեղամասի մակերեսը փոքրացվել է 1,01հա-ով /3.35 հա-ից դարձել է 2.34 հա/ ինչը և հաշվի է առնվել նախագծում և ՇՄԱԳ-ում:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնելով լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 2018 թվականի փետրվարի 22-ի N 191–Ն որոշման պահանջներով՝ շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
3. Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
4. Հանքավայրը շահագործել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հողերի կատեգորիան փոխելուց հետո:
5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՍՄԲԱՏԱԲԵՐԴ» ԲԲԸ կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Սմբատաբերդի անդեզիտաբազալտների հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան